



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիոյան

«27» 12 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 023 1 - 21

Ձեռնարկողը՝

«Գազավիկ» ՍՊԸ
Արագածոտնի մարզ, գ. Մելիքյուղ 1փ. 39փ.

Գործունեությունը՝

Արաբկիր վարչական շրջանի Գրիբոյեդով 48/6 հասցեում
նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0231-21

<27> 12 2021թ.

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Գրիբոյեդով 48/6 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝

«Գազավիկ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝

«Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝

ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Գրիբոյեդով 48/6 հասցեում «Գազավիկ» ՍՊԸ կողմից նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

Գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2021թ հոկտեմբերի 1-ի N01/18-07/3510-Ա ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.7085հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի, Արաբկիր վարչական շրջանի Գրիբոյեդովի փողոց 48/6 հասցեում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բազմաբնակարան բնակելի համալիր:

Համաձայն նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ Հայտ) հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Տեղամասում մինչև 40 մետր խորությամբ փորված հորատանցքերով ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

Տարածքում բնության և պատմամշակութային հուշարձանները և **ծառայության**



Նախատեսվող գործունեության տարածքը բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում է Երևանի ֆլորիստիկ շրջանին, որին յուրահատուկ են կիսաանապատային և անապատային բուսածածկույթը: Համաձայն հայտի նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չեն հայտնաբերվել:

Ըստ հայտի տարածքում առկա են քանդման ենթակա շինություններ: Տարածքը հանդիսանում է արտադրական և օժանդակ շինություններով ծանրաբեռնված տարածք: Կից գտնվում են բնակելի տներ, բազմաբնակարան բնակելի շենքեր, 50մ հեռավորության վրա գործում է ԱԳԼՃ կայան: Տարածքում առկա է քանդման ենթակա ավտոտեխսպասարկման կայան 502.6քմ, գրասենյակ 145.2 քմ, պահեստներ (42.5քմ, 298.9, 114.5քմ), հոր 21.3քմ, օժանդակ շինություն 29.2քմ, 14.5քմ և պարիսպ (33.6քմ, 67քմ, 167.61քմ): Մոտակա շենքերը նախատեսվող համալիրից տեղակայված են 12-28.6մ հեռավորության վրա:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողամասի մակերես՝ 7085քմ
- կառուցապատման մակերես - 2833քմ
- կանաչապատման մակերես - 2840քմ 40.08%
- մայթեր և ճանապարհներ - 1412քմ
- բնակարանների քանակ՝ 288
- ստորգետնյա կայանատեղիների քանակ՝ 224 - 77.77%
- 2 և -1 հարկերում շինարարական մակերեսը յուրաքանչյուր՝ 3880քմ,
- շենքերի հիմնական բարձրությունը 43-55մ է:

Բնակելի թաղամասը բաղկացած է 4 բնակելի մասնաշենքերից՝ մեկ 16 հարկանի, երկու 14 հարկանի և մեկ 12 հարկանի համակցված բնակելի <<Ո>>-ածն համալիրով կիսապարիսպ բակային տարածքով բնակելի թաղամաս:

Թաղամասի մոտեցումները երկուսն են՝ նախատեսված են Գրիբոեդովի և Ադոնցի փողոցից, ինչպես նաև հարևանությամբ կառուցման փուլում գտնվող բնակելի համալիրների շինարարության ավարտից հետո նախատեսվում են լրացուցիչ մոտեցումներ ներբակային տարածքներից:

Երկրորդ հարկից սկսած կազմակերպված են բնակելի տներ՝ մեկ, երկու, երեք և չորս սենյականոց բնակարաններ, հիմնականում արևհայաց կողմնորոշմամբ ինչպես նաև բոլոր անկյունային և միջանցիկ օդափոխությամբ: Պատշգամբներում՝ ելնելով ճարտարապետական լուծումների կարեվորությունից, նախատեսվում են հրակայուն ապակե պատուհաններ: Տարբեր մասնաշենքերում նախատեսվում է իրականացնել միջանցքներից ծխահեռացման համակարգ, ինչպես նաև միակողմանի հորաններով օդափոխության համակարգ: Տանիքները հարթ են, ներքին ջրահեռացմամբ:

Շենքերի ճակատային արտաքին հարդարումը նախատեսվում է բնական քարերից, ապակեպատ և ժամանակակից նյութերի կիրառմամբ:

Հողամասի չկառուցապատված մասը նախատեսվում է բարեկարգել հետիոտն անցումներով, մեքենաների մոտեցումներով, ժամանակավոր կայանատեղիներով, ինչպես նաև կանաչ տարածքներով, հանգստի տաղավարներով, խաղահարթակներով և ջրային մակերեսներով:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար, բնակելի շենքերում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:



Ըստ հայտի համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել Ա դասի, ինչի համար իրականացվելու են համալիր միջոցառումներ:

Շինարարության և շահագործման համար էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ կառուցվելիք ենթակայանի 0.4 կՎ I և II հատոններից:

Բազմաֆունկցիոնալ շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին: Ջրամատակարարումը նախատեսվում է Գրիբոյեդով և Արղության փողոցների խաչմերուկով անցնող D=400մմ տրամագծով խողովակից, ջրահեռացումը D = 700մմ տրամագծի խողովակով Մամիկոնյանց և Վրացական փողոցների խաչմերուկից, հիդրանտի տեղադրումը՝ Գրիբոյեդով փողոցով անցնող D=300մմ ջրագծից, հեղեղատարը՝ Գրիբոյեդով փողոցով անցնող D=300մմ հեղեղատար:

Բազմաբնակարան շենքի գազամատակարարումը նախատեսվում է իրականացնել համաձայն «Հայրուսգազարդ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ 3100 խմ ծախսով:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ծայնամեկուսիչ նյութերի օգտակործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ: Ջեռուցումը և օդափոխությունը ողջ համալիրում կատարվելու է անհատական լուծմամբ օդորակիչների և ջեռուցման կաթսաների միջոցով:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարական աշխատանքները տևելու են 36 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կունևկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն: Շինարարական հրապարակում պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը, կայանվելու են համապատասխան շինտեխնիկան, ժամանակավոր շինությունները և այլն: Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Բնակելի համալիրի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 27000 խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 21600խմ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կապակի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ կենցաղային (21տ) կիավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և շինարարական աղբ (4180մ³), այդ թվում տարածքում առկա արտադրական և օժանդակ շինությունների քանդումից առաջացող շինարարական աղբը, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:



հատկացված վայր՝ Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի խճուղի 4 հասցեում գտնվող տարածք, իսկ կենցաղային աղբը տեղափոխվելու է աղբահավաք ծառայության կողմից:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների, հանվող գրունտի ջրցանի, շինանձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (100 մարդ), ինչը կազմում է 2622մ³/շինժամ: 1000մ² ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 1620մ³/շին.ժամ: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 4242մ³/շին.ժամ: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդվելու են պարզարան (25մ³), որտեղ կատարվելու է մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը բերվելու է պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով: Աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն՝ տեղադրելով բիոզուգարաններ, իսկ խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Կանաչապատ մակերեսը կազմում է 2840մ²: Քանի որ, ըստ գնահատման հայտի շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է, նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի 550մ³ բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Տարածքում նախատեսվում է տնկել թխկի, իլենի, ասպիրակ, Ֆորզիցիա, խենոմելես, սոսի արևելյան, հուդայածառ, լաբոռնում անագիրատերև:

Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում օրական 2-3 անգամ,
- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ,
- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,
- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,



- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավվում, ինչպես նաև ապահովել դրանք տեխնիկական նորմալ վիճակի շահագործումը,
- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,
- տնկված ծառերի և խոտածածկի խնամք և մոնիթորինգ,
- մթնոլորտային օդի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար՝ ամբողջ շինարարության ընթացքում նախատեսվելու է հատկացնել 1960000 դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն նախնական գնահատման հայտի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Բնակելի համալիրի հարևանության գործում է ԱԳԼՃ կայան, ինչի հեռավորությունը նախատեսվող բնակելի շենքերից կազմում է 50մ: Առկա է «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» դրական եզրակացությունը, առ այն, որ նախագիծը համապատասխանում է հրդեհային անվտանգության պահանջներին: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Երևանի քաղաքապետարանը, քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը, «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, Արաբկիր վարչական շրջանը, շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, աշխատանքի անվտանգության և քաղաքաշինական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող գործունեությունն իրականացնել քաղաքաշինության նախարարի 2014թ. հոկտեմբերի 14-ի N263-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ-30-01-2014 նորմերի պահանջներին համապատասխան, ապահովելով գազալցակայանից բնակելի շենքերի համար սահմանված անհրաժեշտ հեռավորությունը:
- Ապահովել հայտում նախատեսված՝ գործունեության շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացումը:



- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի էներգախնայողության և էներգաանվտանգության հետ կապված միջոցառումներն իրականացնել՝ համաձայն ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների:

- Մինչև գործունեության իրականացումը կանաչապատման նախագիծը ներկայացնել Երևանի քաղաքապետի հաստատմանը՝ պահպանելով հայտում ամրագրված 40.8% կանաչապատման մակերեսը:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Գազավիկ» ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Գրիբոյեդով 48/6 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ գլխ.մասնագետ՝



Ա. Վարդանյան